ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

16.10.2025թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային և Լոռու մարզային հանձնաժողովների անդամներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչներ, իրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի կազմի համալրման անհրաժեշտության և նոր կազմի մասին:
   /Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Արսեն Ղարիբյան/
2. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում կատարված հաշմանդամության տեսակի /հենաշարժողական, տեսողական, լսողական, խոսքի, ձայնի, հոգեկան /մտավոր/ խնդիրներ, քրոնիկական հիվանդություններ/, տարիքային խմբի վերլուծության ներկայացում:
   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023–2027թթ. համալիր ծրագրի և Հայաստանում ներառականության և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ստեղծման մասին:
   /Զեկ.՝ «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ, ՀՀ վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդական Սուրեն Մաղաքյան/
4. ՀՀ կառավարության 08.06.2023թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշման պահանջների կատարման ընթացիկ մոնիթորինգի արդյունքների մասին:
   /Զեկ.՝ ՀՀ կառավարության 08.06.2023թ. N 943-Լ որոշմամբ հաստատված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թթ. համալիր ծրագրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբի ղեկավար Վանիկ Այվազյան/
5. Անձի ֆունկցիոնալության գնահատման իրականացման և կարիքի հիման վրա ձևավորված համակարգերի, ինչպես նաև Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների և Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հետ համագործակցային աշխատանքների մասին:
   /Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Հայրապետյան/

6. Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների կողմից իրականացվող անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի կիրառական աշխատանքների մասին: Լոռու մարզի ամփոփ համակարգված վերլուծական աշխատանքի ներկայացում:

/Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնի տնօրեն Լուսինե Աքմաքչյան/

7. Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից իրականացվող երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համակարգի կիրառական աշխատանքների մասին: Լոռու մարզի ամփոփ համակարգված վերլուծական աշխատանքի ներկայացում:

/Զեկ.՝ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության Վանաձորի կենտրոնի տնօրեն Սասուն Հարությունյան/

8. Հասարակական կազմակերպությունների համագործակցային աշխատանքը պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ Անուշ Ասլանյան/

9. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Նախապատրաստել գրություն ուղղված մարզում գործող ՀԿ-ներին՝ բնագավառում առկա հիմնախնդիրները, լուծում պահանջող հարցերը Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու առաջարկով:

բ/ Նախապատրաստել գրություն ուղղված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ հանձնարարել ՀՀ Լոռու մարզում գործող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին՝ համագործակցված աշխատանք իրականացնել մարզի համայնքապետարանների հետ, առաջացող հարցերը հնարավորինս արագ ընթացք տալու առաջարկով:

գ/ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացմամբ՝ Հանձնաժողովի կազմում ընդգրկել համայնքային սոցիալական աշխատող:

դ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կայք-էջում տեղադրելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի անդամ Ալլա Նահապետյանին՝ ապահովել Հանձնաժողովի նիստի հրապարակայնությունը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ